Հավելված № 1
էլեկտրաէներգետիկական համակարգում
սակագների սահմանման ու վերանայման
կարգի

ՑԱՆԿ
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. ՎԷԱ կայանների համար՝
   1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
   2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի:
2. ԿԷԱ կայանների, ՊԷԱ կայանների, ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի համար՝
   1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
   2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում և առկայության դեպքում նաև Հայտատուի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի,
   3) տեղեկատվություն էլեկտրական էներգիայի (հզորության) կանխատեսվող արտադրանքի վերաբերյալ՝
      ա. հիդրոէլեկտրակայանում (հիդրոէլեկտրակայանների համալիրում)՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-1-ի,
      բ. ատոմային էլեկտրակայանում՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-2-ի,
      գ. ջերմային էլեկտրակայանում՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-3-ի,
   4) Արտադրողի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի հաշվարկ՝ ԿԷԱ կայանների, պետություն-մասնավոր գործընկերության պայմանագիր չունեցող ՀԷԱ կայանների և Հաշվեկշռման ծառայություն մատուցող Արտադրողի դեպքում համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-1-ի, իսկ ՊԷԱ կայանների և

պետություն-մասնավոր գործընկերության պայմանագիր ունեցող ՀԷԱ կայանների դեպքում՝ լիցենզիայի պայմաններում կամ պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված պայմանագրի մաս կազմող սակագնային համաձայնագրում ամրագրված մոտեցումներին համապատասխան:

3. Հաղորդողի, Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի համար՝
   1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
   2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում և առկայության դեպքում նաև Հայտատուի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի,
   3) տեղեկատվություն հաղորդվող էլեկտրական էներգիայի կանխատեսման վերաբերյալ (ներկայացվում է միայն Հաղորդողի կողմից)՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-4-ի,
   4) էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման սակագների հաշվարկ՝ համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-2-ի:
4. Բաշխողի և Երաշխավորված մատակարարի համար՝
   1) Սակագների սահմանման կամ վերանայման դիմում՝ համաձայն սույն կարգի №2 հավելվածի,
   2) Հայաստանի Հանրապետությունում տպագրվող երկու օրաթերթերում կամ օրաթերթերի ինտերնետային կայքում և առկայության դեպքում նաև Հայտատուի ինտերնետային կայքում Սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ Հայտատուի մտադրության մասին հայտարարություն՝ համաձայն սույն կարգի №3 հավելվածի,
   3) տեղեկատվություն Բաշխման ցանց էլեկտրական էներգիայի մուտքի և առաքման կանխատեսման վերաբերյալ՝ համաձայն սույն կարգի №4 հավելվածի Ձև 4-5-ի,
   4) Բաշխողի կողմից Բաշխման ծառայության մատուցման սակագների հաշվարկ՝ համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-3-ի,
   5) Երաշխավորված մատակարարի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկ՝ համաձայն սույն կարգի №5 հավելվածի Ձև 5-4-ի:

5. Սույն հավելվածի 1-4-րդ կետերով (բացառությամբ 2-րդ ենթակետերի) սահմանված ձևերով Հայտատուի կողմից Հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված լինեն լիազորված անձի ստորագրությամբ և Հայտատուի կնիքով (առկայության դեպքում):
6. Սույն հավելվածի 2-4-րդ կետերի 3-րդ, 4-րդ և 4-րդ կետի 5-րդ ենթակետերով սահմանված ձևերով նախատեսված ցուցանիշները Հայտատուների կողմից կարող են համալրվել նոր տողերով կամ եղած տողերը տրոհվել բաղկացուցիչ մասերի: